ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊՈՂՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԱՐԹՈՒՐԻ

ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ

ԺԲ.00.03 - «Մասնավոր իրավունք՝ քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2018

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ПОГОСЯН ГЕВОРГ АРТУРОВИЧ

НЕКОММЕРЧЕСКИЕ ОРГАНИЗАЦИИ КАК СУБЪЕКТЫ ГРАЖДАНСКОГО ПРАВА

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.03 – “Частное право – гражданское, торговое (коммерческое); международное частное, семейное, трудовое право, право социального обеспечения”

ЕРЕВАН - 2018

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Դ. Ավետիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Մ. Հայկյանց

իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Ա. Թավադյան

Առաջատար կազմակերպություն՝ **Հայ-ռուսական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018 թվականի հուլիսի 2-ին, ժամը 11^{00}-ին ՀՀ ԲՈՀ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (Երևան – 0025, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի Պետական Համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2018 թվականի մայիսի 31-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ իրավ. գիտ. թեկ., դոցենտ Ա. Ա. Մանասյան

Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юрид. наук, профессор В. Д. Аветисян

Официальные оппоненты: доктор юрид. наук, профессор А. М. Айкянц

кандидат юрид. наук А. А. Тавадян

Ведущая организация: **Российско-Армянский университет**

Защита диссертации состоится 2-ого июля 2018 г. в 11^{00} часов на заседании Специализированного совета ВАК РА 001 по юриспруденции при Ереванском государственном университете (Ереван - 0025, Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Ереванского государственного университета.

Автореферат разослан 31-ого мая 2018 г.

Ученый секретарь специализированного совета: кандидат юридических наук, доцент А. А. Манасян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Հասարակության զարգացման ներկայիս փուլում մասնավոր իրավահարաբերությունների և մասնավոր շահերի դիտարկմանը գրեթե համահավասար կարևորվում և մեծ ուշադրության է արժանանում հասարակական նշանակության իրավահարաբերությունների ուսումնասիրությունն ու գոյություն ունեցող հիմնահարցերի արդյունավետ լուծումների որոնումը: Հատկանշական է, որ ոչ առևտրային կազմակերպությունները քաղաքացիական իրավունքի սուբյեկտների մեջ առանձնանում են նրանով, որ հասարակական նշանակության բոլոր իրավահարաբերություններն այս կամ այն կերպ առնչվում են դրանց, և վերջիններիս վստահված է հասարակության առավել ընդհանուր շահերի ներկայացումն ու պաշտպանությունը: Հետևաբար նշված տեսակի իրավաբանական անձանց գործունեության հետ կապված հիմնահարցերն ու դրանց հնարավորինս արդյունավետ լուծումներ տալու անհրաժեշտության գիտակցումը կասկածի տեղիք չի տալիս:

Ավելին՝ վերջին շրջանում և ներկայումս ոչ առևտրային կազմակերպություններին վերաբերող օրենսդրությունը գտնվում է նաև Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների իրավաստեղծ մարմինների, ինչպես նաև խնդրո առարկա ոլորտի բարեփոխումներին աջակցելու նպատակով ստեղծված միջազգային կառույցների ուշադրության կենտրոնում: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության զարգացման արդի ուղղություններից մեկը քաղաքացիական հասարակության զարգացմանը նպաստելն է, որում առաջնային դեր ունեն քաղաքացիական հասարակության ինստիտուտներից ոչ առևտրային կազմակերպությունները, որոնք իրենց առաքելությունն իրականացնում են շատ հաճախ գույքային իրավահարաբերություններին մասնակցելու միջոցով: Չնայած օրենսդրական մեխանիզմների սակավությամբ ու դրանց գործունեության ներկայիս տարերայնությամբ պայմանավորված լայնածավալ ուսումնասիրությունների անհրաժեշտությանը, այդուհանդերձ, ոչ առևտրային կազմակերպությունների՝ որպես քաղաքացիական իրավահարաբերության առանձնահատուկ սուբյեկտների գործունեությունը և դրա կապակցությամբ առաջացող հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում լիարժեքորեն բացահայտված և լուսաբանված չեն՝ պայմանավորված այս ոլորտում կատարված ուսումնասիրությունների խիստ սակավությամբ:

Արդյունքում՝ վտանգվում են հասարակական ոլորտի իրավահարաբերությունների մասնակիցների շահերը, քանի որ առկա օրենսդրական կարգավորումների հետևանքով ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության նպատակայնությունն ու արդյունավետությունը էական կասկածների տեղիք են տալիս, մինչդեռ դրանց կարգավորումն ու արդյունավետությունն անհատների մակարդակից վեր է և, եթե կարևորվում են մասնավոր շահերը, ապա առավել քան կարևոր են ընդհանուր հասարակության կամ դրա որոշակի խմբերի շահերը: Ընդ որում՝ ոչ առևտրային կազմակերպությունների արդյունավետ գործունեությունը մեծապես կապված է վերջիններիս՝ որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտի խնդիրները վերհանելու և լուծելու հետ՝ ինչին ուղղված է աշխատանքը:

Վերոգրյալից բացի, հաշվի առնելով, որ այս ոլորտը հատկապես գույքային իրավահարաբերությունների շրջանակներում լայն հնարավորություններ է ընձեռում տարատեսակ չարաշահումների, գիտական աշխատանքն ուղղված է նաև այդ չարաշահումների դեմ պայքարելու համար գործուն կառուցակարգեր առաջարկելու միջոցով լուծելու ոլորտում առկա ինչպես տեսական, այնպես էլ գործնական հիմնահարցեր:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտ են հանդիսանում ոչ առևտրային կազմակերպությունների մասնակցությամբ քաղաքացիաիրավական հարաբերությունները՝ հիմնականում հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների օրինակով, իսկ առարկան՝ սույն աշխատանքի նպատակներին և խնդիրներին համահունչ ոչ առևտրային կազմակերպությունների և վերջիններիս մասնակցությամբ իրավահարաբերությունների իրավական կարգավորման առկա հիմնախնդիրները:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը ՀՀ-ում ոչ առևտրային կազմակերպությունների մասնակցությամբ իրավահարաբերությունների համակարգային ուսումնասիրությունն ու վերլուծությունն է, տեսական և գործնական հիմնախնդիրների վերհանումը, շրջանառության մեջ տեսական նոր դրույթների, տերմինների և պատկերացումների ներդրումը, կատարված համալիր հետազոտության արդյունքների հիման վրա ոչ առևտրային կազմակերպությունների մասնակցությամբ իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրության բացերի լրացումը, առկա կարգավորումների կատարելագործումը, ինչպես նաև նշված իրավահարաբերությունների մասնակիցների և շահառուների իրավունքների իրաց-

ման ու պաշտպանության մեխանիզմների ամրապնդմանն ու զարգացմանն ուղղված առաջարկների մշակումը:

Վերոնշյալ նպատակներին հասնելու համար խնդիր է դրվել.

1. բացահայտել մասնավոր իրավունքի ոչ առևտրային իրավաբանական անձանց՝ որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտի բնույթը, էությունը, վերջիններիս բնորոշ տարբերակիչ գծերը, և այդպիսով՝

2. ուսումնասիրել և գտնել ոչ առևտրային կազմակերպությունների հատկանիշների հստակեցման և սահմանման չափանիշները,

3. ուսումնասիրության առարկա դարձնել ոչ առևտրային կազմակերպությունների տեսակների հստակեցման ու քաղաքացիական իրավունակության վերաբերյալ հիմնահարցերը,

4. հիմնականում հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների օրինակով վերլուծել ոչ առևտրային կազմակերպությունների կամքը ձևավորող և արտահայտող մարմինների գործառույթներին, գործունեությանը և քաղաքացիաիրավական պատասխանատվությանն առնչվող հիմնահարցեր,

5. վեր հանել ոչ առևտրային կազմակերպությունների կողմից տնտեսական, այդ թվում՝ ձեռնարկատիրական, գործունեությամբ զբաղվելու առանձնահատկությունները,

6. հիմք ընդունելով նման աշխատանքներին ներկայացվող ծավալային սահմանափակումները՝ հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների օրինակով համեմատական անդրադարձ կատարել ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման առանձնահատկություններին և առևտրային կազմակերպություններից տարբերություններին (ներառյալ՝ կորպորատիվ կառավարում» և «իրավաբանական անձի կառավարում» եզրույթների կիրառելիությունը),

7. ուսումնասիրել ոչ առևտրային կազմակերպությունների մասնակցությամբ քաղաքացիական իրավահարաբերությունների կարգավորմանը վերաբերող ՀՀ և արտասահմանյան պետությունների, ներառյալ՝ Գերմանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Նիդեռլանդների, Կանադայի, ԱՄՆ-ի իրավական համակարգի առանձնահատկությունները, Մարդու իրավունքների եվրոպական, ՀՀ սահմանադրական, վճռաբեկ դատարանների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների դատարանների որոշումները, տարբեր պետությունների իրավասու պետական մարմինների (օրինակ՝ ԱՄՆ ներքին եկամուտների ծառայություն, Կանադայի եկամուտների գործակալություն և այլն) կողմից տրված գործնական նշանակություն ունեցող պարզաբանում-

ները, Եվրոպայի խորհրդի և այլ միջազգային միավորումների կողմից հրապարակված իրավական ակտերն ու մեկնաբանությունները՝ հետազոտելով բոլոր այն կիրառելի և առանձին հետաքրքրություն ներկայացնող իրավական համակարգերն ու կարգավորումները, որոնք բացակայում են ՀՀ-ում կամ բավականաչափ մանրամասն ու արդյունավետ կարգավորած չեն՝ նպատակ ունենալով վեր հանելու Հայաստանի Հանրապետության համար առավել կիրառելի լուծումները:

Միաժամանակ պայմանավորված աշխատանքի նպատակներով և խնդիրներով՝ ուսումնասիրությունը չի ընդգրկում ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման և լուծարման հիմնահարցերն ու պետության կամքով ստեղծված կազմակերպությունների քաղաքացիական իրավասուբյեկտության առանձնահատկությունները:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքը: Ոչ առևտրային կազմակերպությունների և վերջիններիս մասնակցությամբ իրավահարաբերությունների ինստիտուտի վերաբերյալ տեսական խորը և համապարփակ ուսումնասիրությունները հայկական իրականության մեջ գրեթե բացակայում են, իսկ հայրենական մի շարք հեղինակներ իրենց աշխատություններում անդրադարձել և վերլուծել են քննարկվող կազմակերպությունների և իրավահարաբերությունների առանձին դրսևորումներին վերաբերող որոշ հիմնահարցեր: Դրանցից կարելի է առանձնացնել աշխատության համար որպես տեսական և գիտական հիմք ծառայած Վ. Դ. Ավետիսյանի, Տ. Կ. Բարսեղյանի, Դ. Մ. Սերոբյանի աշխատությունները, որոնք սակայն ամբողջությամբ ոչ առևտրային կազմակերպությունների ինքնուրույն բնույթին և ոչ առևտրային կազմակերպություններին, ինքնին, չեն վերաբերում: Ոչ առևտրային կազմակերպություններին և վերջիններիս մասնակցությամբ իրավահարաբերություններին վերաբերող հարցերը հետազոտության են ենթարկվել ինչպես արևմտյան, այնպես էլ հետխորհրդային մի շարք երկրների (ԱՄՆ, Նիդեռլանդներ, Ֆրանսիա, Ռուսաստան, Վրաստան, Ուկրաինա և այլն) գիտական աշխատություններում: Դրանց շարքում կարելի է առանձնացնել Ա. Սունգուրովի, Ա. Քոմփթելայի, Բ. Բլյախմանի, Գ. Շերշենևիչի, Դ. Ռենցի, Զ. Չերնիլովսկու, Է. Ֆրիմանի, Ի. Իվանովայի, Ի. Մոստովիցի, Կ. Լաուէի, Կ. Հոբտի, Հ. Էլլերի, Մ. Բուշելի, Մ. Բրագինսկու, Մ. Քելիի, Մ. Ֆրիդմանի, Ն. Ժովնիրի, Պ. Բարենբոյմի, Պ. Ուիթի, Ջ. Բականի, Ջ. Հոբկինսի, Ս. Բրատուսի, Ս. Մագիլևսկայայի, Ս. Պրոշինի, Ս. Սալավ-

յովի, Վ. Զորկինի, Ք. Քորնֆորթի, Օ. Կուտաֆինի, և այլոց աշխատությունները:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքը: Հետազոտության նորմատիվային հենքը կազմել է ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող ՀՀ օրենսդրությունը: Աշխատանքի իրավական և փորձառական հիմք են հանդիսացել նաև արտասահմանյան երկրների նորմատիվ իրավական ակտեր, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական, վճռաբեկ, ինչպես նաև օտարերկրյա մի քանի պետությունների դատարանների դատական ակտեր, Եվրոպայի խորհրդի կողմից հրապարակված մի շարք իրավական ակտեր:

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը և հատուկ մեթոդներն ու եղանակները: Ատենախոսությունում, պայմանավորված հետազոտման կոնկրետ նպատակով ու խնդիրներով, օգտագործվել են ինչպես ընդհանուր հետազոտական՝ դիալեկտիկական, լեզվատրամաբանական ու համատեսական՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, սինթեզի, անալիզի մեթոդները, այնպես էլ մասնագիտական հատուկ՝ համակարգակառուցվածքային, իրավահամեմատական, ձևական-իրավաբանական մեթոդները, որոնց կիրառմամբ վերլուծվել են ՀՀ ու օտարերկրյա պետությունների՝ ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությունն ու դրանց վերաբերող օրենսդրությունը, գիտահետազոտական աշխատանքները, դատական ակտերը, վեր են հանվել այս բնագավառում առկա տեսական և գործնական հիմնախնդիրները, դրանց կարգավորման ուղղությամբ առաջարկվող ընդհանուր լուծումները և այլն:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսությունը հայրենական իրավագիտության առաջին համապարփակ և ամբողջական գիտահետազոտական ուսումնասիրությունն է, որտեղ փորձ է կատարվել հիմնականում հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների օրինակով հիմնավորել ոչ առևտրային կազմակերպությունների մասնակցությամբ քաղաքացիական իրավահարաբերությունների առանձնահատկությունները, վեր հանել ոչ առևտրային իրավաբանական անձանց բնորոշ հատկանիշները, կառավարման (ներառյալ՝ կորպորատիվ կառավարումը) առանձնահատկություններն ու նախընտրելի մոդելը, այդ թվում՝ ոչ առևտրային կազմակերպություններում շահերի բախմանը, չափազանց բարձր վարձատրությանը, կառավարման մարմինների պատասխանատվությանը

վերաբերող իրավակարգավորումների բացերը, ներկայացնել ոչ առևտրային կազմակերպությունների մասնակցությամբ իրավահարաբերությունների առավել արդյունավետ կարգավորման համար վերջիններիս դասակարգումը և դասակարգումից բխող առանձնահատկություններով պայմանավորված իրականացնել դրանց մասնակիցների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության մեխանիզմների ուսումնասիրություն, վեր հանել ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման ոլորտում առկա օրենսդրական և իրավակիրառ խնդիրներն ու առաջարկել առաջադեմ լուծումներ: Ավելին՝ ատենախոսությամբ հետազոտվել ու բնութագրվել են ոչ առևտրային կազմակերպությունների՝ որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտի առանձնահատկություններին վերաբերող այնպիսի տեսական հասկացություններ ու եզրույթներ, որոնք մինչ այժմ հայտնի չեն եղել հայ իրավագիտական մտքին:

Ընդ որում՝ նկարագրված գիտական ուսումնասիրությունը կատարվել է եվրոպացի և ամերիկացի հետազոտողների՝ ոչ առևտրային կազմակերպությունների քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակցությանն առնչվող վերջին շրջանի աշխատությունների ու քննարկվող ոլորտում արտասահմանյան փորձի, այդ թվում՝ համաշխարհային նշանակության փաստաթղթերի հետազոտման հիման վրա՝ նպատակ ունենալով մշակել դրանցում առկա առաջադեմ գաղափարները ՀՀ-ում ներդնելու ուղիները: Արդյունքում՝ ընդհանրացնելով կատարված ուսումնասիրությունները, արվել են ինչպես տեսական եզրահանգումներ, այնպես էլ ներկայացվել են ՀՀ քաղաքացիական օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայում առկա թերությունները շտկելուն ուղղված առաջարկություններ: Ատենախոսության գիտական նորույթն առաջին հերթին դրսևորվում է պաշտպանության ներկայացվող դրույթներում և օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկներում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. Կատարված ուսումնասիրությամբ վեր են հանվել հանրային և մասնավոր իրավունքի ոչ առևտրային իրավաբանական անձանց բնորոշ հատկանիշները և ըստ այդմ, հիմնավորվել է մասնավոր իրավունքի ոչ առևտրային կազմակերպությունները միավորումների և հիմնադրամների տարանջատելու անհրաժեշտությունը[1]: Միաժամանակ մասնավոր իրավունքի ոչ

[1] Այս խնդիրներն առավել մանրամասն ներկայացված են եզրակացության 1-3-րդ կետերում:

առևտրային իրավաբանական անձանց ձեռնարկատիրական իրավասուբյեկտության շրջանակը հստակեցնելու և գոյություն ունեցող օրենսդրական անորոշությունները վերացնելու համար առաջարկվում է որպես ոչ առևտրային կազմակերպություններն առևտրայիններից տարանջատելու հիմք ընդունել ոչ թե գործունեության, այլ ստեղծման նպատակը, որը չի կարող լինել շահույթ ստանալը: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը առևտրային և ոչ առևտրային իրավաբանական անձանց սահմանազատման հիմքում դնում է վերջիններիս՝ *գործունեությամբ* շահույթ ստանալու նպատակ հետապնդելը կամ չհետապնդելը, ինչպես նաև ստացված շահույթը մասնակիցների միջև բաշխելը կամ չբաշխելը, մինչդեռ նույն օրենսգիրքը կատարված օրենսդրական փոփոխություններից հետո ոչ առևտրային կազմակերպություններին իրավունք է տալիս անմիջականորեն զբաղվելու ձեռնարկատիրական, այսինքն՝ շահույթ ստանալու նպատակ հետապնդող գործունեությամբ: Արդյունքում՝ շահույթ ստանալը իրավաչափորեն կարող է լինել ոչ առևտրային կազմակերպության գործունեության նպատակներից մեկը, մինչդեռ չի կարող լինել ստեղծման նպատակը:

Ավելին՝ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության իրավաչափությունը գնահատելու համար սահմանում է, որ այն պետք է համապատասխանի կազմակերպության կանոնադրությամբ սահմանված նպատակներին, մինչդեռ կանոնադրությամբ սահմանված նպատակները շատ հաճախ նույնանում են գործունեության նպատակների հետ (օրինակ՝ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մաս, 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ), ինչի արդյունքում գործնականում անհնար է դառնում քննարկվող կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեության իրավաչափության գնահատումը:

Ուստի առաջարկում ենք սահմանել օրենսդրական հստակ պահանջ առ այն, որ ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունը պետք է համապատասխանի վերջինիս ստեղծման նպատակներին:

2. Ոչ առևտրային կազմակերպությունների հատուկ իրավունակության առնչությամբ կատարված ուսումնասիրությունների արդյունքում հիմնավորվել է, որ վերջիններիս առավելապես բնորոշ է ոչ թե ձեռնարկատիրական (սեփական ռիսկով շահույթ ստանալուն ուղղված), այլ տնտեսական գործու-

նեությամբ զբաղվելը (օրինակ՝ առևտրային կազմակերպություններում մասնակցությունից, նվիրատվություն ստացած գույքի վաճառքից կամ վարձակալությունից ստացվող միջոցներ), որի արդյունքում վերջիններս ստանում են եկամուտ: Մինչդեռ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է միայն ոչ առևտրային կազմակերպության կողմից ստացված *շահույթը* մասնակիցների միջև բաշխելու արգելք: Հետևաբար նշված տեսակի կազմակերպությունները կարող են ձեռնարկատիրական գործունեության արդյունք և շահույթ չհամարվող եկամուտները բաշխել իրենց մասնակիցների միջև, ինչը կարծում ենք թույլատրելի չէ:

Ուստի առաջարկվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսել, որ ոչ առևտրային կազմակերպություններն իրավունք ունեն զբաղվելու տնտեսական, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությամբ, իսկ օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված շահույթը բաշխելու արգելքի սկզբունքը վերաձևակերպել որպես եկամուտը, այդ թվում՝ շահույթը բաշխելու արգելքի սկզբունք:

3. Ուսումնասիրելով «կորպորատիվ կառավարում» եզրույթը, դրա կիրառելիությունն ու առանձնահատկությունները միավորում համարվող ոչ առևտրային կազմակերպությունների նկատմամբ և վերջիններիս կառավարման համակարգում զսպումների ու հակակշիռների գործուն կառուցակարգերի առկայությունը, արդյունքում՝ հասարակական կազմակերպության օրինակով վեր հանելով ոչ առևտրային կազմակերպությունների կորպորատիվ կառավարման առանձնահատկությունները՝ պարզվել է, որ ներկայումս ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ հասարակական կազմակերպությունների կորպորատիվ կառավարման հստակ մոդել, ինչը հիմնադիրներին բացարձակ հայեցողություն է տալիս գործադիր մարմնի գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմին՝ խորհուրդ, ձևավորելու, ինչպես նաև կառավարման երկաստիճան, եռաստիճան կամ ցանկացած այլ համակարգ ընտրելու հարցում՝ առանց հստակեցնելու ստեղծվող մարմինների իրավասության շրջանակը, միաժամանակ հնարավորություն ընձեռելով հասարակական կազմակերպության կառավարումը կենտրոնացնելու միանձնյա գործադիր մարմնի ձեռքում՝ առանց վերջինիս կողմից հնարավոր չարաշահումների դեմ գործուն կառուցակարգեր նախատեսելու, ինչի արդյունքում վտանգվում է կազմակերպության արդյունավետ կառավարումը:

Վերոնշյալ խնդիրների լուծման նպատակով առաջարկում ենք «Հասարակական կազմակերպությունների» մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու միջոցով սահմանել կազմակերպության կառավարման հստակ մոդել, այն է՝ **կառավարման եռաստիճան համակարգ**՝ ընդհանուր ժողով, խորհուրդ, գործադիր մարմին: Ընդ որում՝ վերոնշյալ նկատառումներից ելնելով՝ օրենքով պետք է նաև հստակ նախատեսվի խորհրդի իրավական կարգավիճակը՝ ներառելով գործադիր մարմին ձևավորելու և դրա գործունեությունը վաղաժամկետ դադարեցնելու իրավասություն ունենալու հնարավորությունը:

4. Ուսումնասիրելով ոչ առևտրային կազմակերպությունների կամքը ձևավորող և արտահայտող մարմինների դերը և գործառույթները՝ հիմնավորվել է, որ ոչ միայն իրավաբանական անձի անունից հանդես գալու իրավունք ունեցող, այլև կառավարման այլ մարմիններն իրենց վերապահված գործառույթների և կենսական նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ վերջնական որոշումներ կայացնելու ուժով կարող են էական ազդեցություն ունենալ քննարկվող կազմակերպությունների գործունեության վրա: Ուստի խնդրո առարկա իրավահարաբերություններում անորոշության վերացման, միաժամանակ նաև այս կազմակերպությունների կամքը ձևավորող և արտահայտող մարմինների կողմից հնարավոր չարաշահումները կանխելու, կազմակերպության արդյունավետ գործունեությամբ շահագրգռված այլ անձանց, այդ թվում՝ շահառուների և պարտատերերի շահերի համակողմանի պաշտպանության նպատակով՝ առաջարկվում է օրենսդրական փոփոխություններ և լրամշակումներ կատարելու միջոցով քաղաքացիաիրավական պատասխանատվություն նախատեսել ոչ միայն կազմակերպության անունից հանդես գալու իրավունք ունեցող, այսինքն՝ գործադիր մարմնի, այլև կազմակերպության բոլոր կառավարման մարմինների անդամների համար՝ վերջիններիս համար սահմանելով հետևյալ պարտականությունները. *գործել՝ ելնելով կազմակերպության լավագույն շահերից, իրականացնել իրենց իրավունքները և կազմակերպության նկատմամբ իրենց պարտականությունները կատարել բարեխիղճ ու ողջամիտ կերպով, պատշաճ մասնագիտական մակարդակով, անհրաժեշտ հոգածություն և շրջահայացություն դրսևորելով, որը սովորաբար նմանատիպ և համեմատելի հանգամանքներում կիրականացներ ցանկացած ողջամիտ անձ (duty of care), իրենց իրավունքների իրացման և պարտականությունների կատարման ժամանակ գերապատ-*

վությունը տալ և հանձնառու լինել կազմակերպության ստեղծման և գործունեության հիմնական նպատակների իրացմանը (duty of loyalty): Միաժամանակ կարծում ենք, որ պետք է բացառել նշված անձանց պատասխանատվությունն այն դեպքերում, *երբ վերջիններս ողջամիտ գործարար տրամաբանությունից ելնելով՝ կայացրել են որոշումներ, նույնիսկ եթե դրանք կազմակերպությանը հետագայում հասցրել են այնպիսի վնասներ, որոնց առաջացումն այդ որոշումն ընդունելիս հստակորեն հաշվի է առնվել որպես ռիսկ (business (best) judgement rule):*

5. Ոչ առևտրային կազմակերպությունների կողմից կնքվող գործարքների և դրանց իրավական հետևանքների առնչությամբ կատարված ուսումնասիրությունների արդյունքում հիմնավորվել է, որ շահերի բախման (շահագրգռվածության) առկայությամբ գործարքների, իսկ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս՝ նաև խոշոր գործարքների վերաբերյալ իրավակարգավորումների բացակայության պայմաններում, գործող օրենսդրությունը թույլատրում է քաղաքացիական շրջանառության սուբյեկտներին ոչ առևտրային կազմակերպության կառուցակարգերը ծառայեցնել իրենց շահերին և դրանից էական օգուտներ ստանալ: Այս ռիսկերի կանխարգելման նպատակով առաջարկվում է օրենսդրական մակարդակում ոչ առևտրային կազմակերպությունների համար նախատեսել խոշոր գործարքների[2], ինչպես նաև շահերի բախման (շահագրգռվածության) առկայությամբ գործարքների վերաբերյալ իրավակարգավորումներ, որոնք առնվազն կներառեն հետևյալ պահանջները՝

- անձանց շրջանակը, որոնց նկատմամբ կիրառելի են շահերի բախման իրավակարգավորումները,
- այդ անձանց կողմից իրենց հայտնի կնքված կամ կնքվելիք գործարքների և շահագրգռվածության մասին բացահայտումը (ներառյալ՝ տարեկան հաշվետվությունների միջոցով), հավաքագրումն ու ուսումնասիրությունը,
- շահերի բախման առկայությամբ գործարքների կնքման կարգը. (մասնավորապես՝ որ մարմինը և ինչպիսի ձայների հարաբերակցությամբ պետք է կնքի նմանատիպ գործարքները, կառավարման մարմնի նիստին շահագրգռվածություն ունեցող անձանց քվեարկության բացառում, պարզաբանման ենթակա հանգամանքների վերաբերյալ անհրաժեշտ հարցումների իրականացում, գործարքի պայմանների արդարացիության և կազմակեր-

[2] Այս խնդիրներն առավել մանրամասն ներկայացված են եզրակացության 7-րդ կետում:

պության լավագույն շահերից բխելու ու ստեղծման նպատակներին չհակասելու մասին եզրահանգում),

- շահագրգռվածության առկայությամբ կնքված գործարքների իրավական հետևանքները՝ գործարքի անվավերություն, վնասների հատուցում և այլն,
- գործարքի անվավերության պահանջի ներկայացման նպատակով հայցային վաղեմության հատուկ ժամկետների նախատեսում:

6. Ուսումնասիրելով ոչ առևտրային կազմակերպությունների եկամուտների ձևավորման աղբյուրների առանձնահատկությունները, ոչ ողջամիտ վարձատրություն և փոխհատուցումներ տալու միջոցով եկամտի քողարկված բաշխում իրականացնելու հնարավորությունը, և այդպիսով կազմակերպությունն իր հիմնական առաքելությունից շեղելու, դրա արդյունքում՝ շահառուների, հասարակության որոշակի շերտերի, իսկ երբեմն էլ ողջ հասարակության շահերը վնասելու հնարավորությունը, հիմնավորվել է ոչ առևտրային կազմակերպության հիմնադիրներին, անդամներին (մասնակիցներին), կազմակերպության մարմիններում ընդգրկված կամ պայմանագրային հիմքերով աշխատող այլ անձանց տրամադրվող աշխատավարձի կամ վարձատրության և իրենց վրա դրված պարտականությունների կատարմամբ պայմանավորված փոխհատուցման ***ողջամտության պահանջ*** սահմանելու անհրաժեշտությունը, որի խախտման համար, կախված կոնկրետ դեպքի հանգամանքներից, պատասխանատվություն կկրի ոչ ողջամիտ վարձատրություն ստացած անձը (միայն մեղքի առկայությամբ) և/կամ կազմակերպության կառավարման այն մարմինը, որը սահմանել է այդ: *Ընդ որում՝ ի թիվս այլ հանգամանքների, վարձատրության ողջամտության գնահատման համար պետք է հիմք ընդունվեն հետևյալ հանգամանքները՝ աշխատողի պարտականությունների բնույթը (եթե անձը կատարում է բարձր մասնագիտական գիտելիքներ պահանջող աշխատանք, ապա վարձատրությունը պետք է բարձր լինի), աշխատանքին հատկացվող ժամանակահատվածը, աշխատողի փորձը, տրված աշխատավարձերի պատմությունը (արդյոք եղել են աշխատավարձի չափի կտրուկ և չհիմնավորված աճեր) և այլն:*

7. Կորպորատիվ տիպի ոչ առևտրային կազմակերպություն և միավորում համարվող հասարակական կազմակերպության շահառուների, պարտատերերի և անդամների իրավունքները պաշտպանելու, անդամության և դրանից բխող իրավունքների և պարտականությունների ծագման պահը

հստակեցնելու, կազմակերպության անդամների իրավահավասարությունը, միավորվելու ազատության հիմնարար իրավունքի իրականացումը և կորպորացիայի մասնակցի բացարձակ իրավունք համարվող՝ կառավարմանը մասնակցելու իրավունքը երաշխավորելու նպատակով, միաժամանակ նաև հաշվի առնելով, որ նշված կազմակերպությունները հիմնականում ստեղծվում են ողջ հասարակության կամ դրա որևէ շերտի շահերը պաշտպանելու համար՝ առաջարկում ենք «Հասարակական կազմակերպությունների» մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրամշակումներ կատարելու միջոցով նախատեսել.

- կազմակերպության անդամների տարբեր դասեր, ձայների քանակ կամ անդամավճարներ սահմանելու հստակ հնարավորություն՝ ելնելով խտրականությունը բացառող որևէ օբյեկտիվ չափանիշից (օրինակ՝ իրավաբանական անձանց միության դեպքում՝ կախված իրավաբանական անձի աշխատակիցների քանակից),
- հասարակական կազմակերպության անդամների հաշվառումը փոխանցել մասնագիտացված կառույցի, որի դերում կարող է լինել ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրը:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտությունների տեսական նշանակությունը նախ և առաջ պայմանավորված է նրանով, որ այն ՀՀ-ում ոչ առևտրային կազմակերպությունների մասնակցությամբ իրավահարաբերությունների հիմնախնդիրների ուսումնասիրությանը նվիրված առաջին համալիր և ամբողջական հետազոտությունն է: Ատենախոսության շրջանակներում արված վերլուծությունների արդյունքները կարող են օգտագործվել հետագա գիտական հետազոտություններում և այն դասընթացներում, որոնց առարկան առնչվում է ոչ առևտրային կազմակերպությունների ուսումնասիրությանը: Այս ոլորտի ուսումնասիրության արդյունքները, առաջարկված լուծումներն ու դրանց հիմնավորումները կարող են օգտագործվել նաև իրավաստեղծ, իրավակիրառ գործունեության ժամանակ և ոչ առևտրային կազմակերպությունների բնույթի և բովանդակության ամբողջական ընկալման, հստակեցման գործընթացում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնում: Հետազո-

տության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել ԲՈՀ-ի կողմից հաստատված ցուցակում ընդգրկված տարբեր ամսագրերում և գիտական ժողովածուներում: Ատենախոսության մի շարք դրույթներ կիրառվել են հեղինակի պրակտիկ գործունեության ընթացքում ՀՀ մի շարք պետական և մասնավոր, այդ թվում՝ իրավաբանական ծառայությունների մատուցմամբ զբաղվող կազմակերպության առաջատար պաշտոններում իրականացված գործունեության ընթացքում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, դրանցում ընդգրկված ութ պարագրաֆից, եզրակացությունից, օգտագործված իրավական ակտերի և գրականության ցանկից:

Ատենախոսության համառոտ բովանդակությունը:

Ներածությունում հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվում են թեմայի մշակվածության աստիճանը, հետազոտության տեսական հիմքը, օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, իրավական և փորձառական հիմքերը, մեթոդները, որոնք կիրառվել են աշխատանքը կատարելիս: Բացի այդ, ներածություն մեջ ներկայացվում է այն գիտական նորույթը, որը պարունակում է ատենախոսությունը, այդ թվում՝ պաշտպանության ներկայացվող դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը և ատենախոսության կառուցվածքը:

Առաջին գլուխը՝ *«ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ» վերտառությամբ,* բաղկացած է չորս պարագրաֆից:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ *«Ոչ առևտրային կազմակերպությունները որպես քաղաքացիական հասարակության կազմակերպություններ» վերտառությամբ,* հեղինակը, հիմք ընդունելով միջազգային իրավական զարգացումներն ու ներպետական օրենսդրական բարեփոխումների հայեցակարգային մոտեցումները, ոչ առևտրային կազմակերպությունները դիտարկում է որպես քաղաքացիական հասարակության կազմակերպություններ՝ վեր հանելով դրանց իրավակարգավորմանը բնորոշ սկզբունքներն ու, ըստ այդմ՝ հիմնավորում մասնավոր իրավունքի և հանրային իրավունքի ոչ առևտրային կազմակերպությունների տարանջատման անհրաժեշտությունը:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ *«Ոչ առևտրային կազմակերպությունների հատկանիշները» վերտառությամբ,* հեղինակն ուսումնասիրում է ոչ առևտրային իրավաբանական անձանց բնորոշ հիմնական հատկանիշներն ըստ ՀՀ օրենսդրության և դրանցում առկա թերությունները, միաժամանակ անդրադարձ է կատարում հայաստանյան և միջազգային իրավական փաստաթղթերին, գիտական գրականությանը, արտասահմանյան փորձին, որոնց վերլուծության արդյունքում պարզաբանվում են ոչ առևտրային կազմակերպություններին բնորոշ հատկանիշները: Ըստ այդմ, ի թիվս այլ հատկանիշների՝ առաջարկվում է ոչ առևտրային կազմակերպություններն առևտրայիններից սահմանազատելու չափանիշ համարել ոչ թե գործունեության, այլ ստեղծման նպատակը:

Առաջին գլխի երրորդ պարագրաֆում՝ *«Ոչ առևտրային կազմակերպությունների տեսակները» վերտառությամբ,* հեղինակը վերլուծում է ոչ առևտրային կազմակերպությունների դասակարգման հիմնահարցի վերաբերյալ ինչպես տեսական, այնպես էլ պրակտիկ պատկերացումները և առաջարկում մասնավոր իրավունքի ոչ առևտրային կազմակերպություններն օրենսդրական մակարդակում դասակարգել երկու տեսակի՝ ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային իրավական ակտերով երաշխավորված միավորվելու ազատության իրավունքի հիման վրա ստեղծված, կորպորատիվ տիպի, անդամություն և ի դեմս անդամների ընդհանուր ժողովի՝ կառավարման բարձրագույն մարմին ունեցող կազմակերպություն՝ ***«Միավորում»*** և որոշակի նպատակ իրագործելու համար կապիտալի միավորման կամ առանձնացման արդյունքում ստեղծված կազմակերպություն՝ ***«Հիմնադրամ»****:*

Առաջին գլխի չորրորդ պարագրաֆում՝ *«Ոչ առևտրային կազմակերպությունների իրավասուբյեկտության և տնտեսական գործունեության առանձնահատկությունները» վերտառությամբ,* հեղինակն անդրադառնում է քննարկվող կազմակերպությունների հատուկ իրավունակության հիմնախնդիրներին, մասնավորապես՝ վերջիններիս կողմից իրականացվող ձեռնարկատիրական և տնտեսական գործունեության հարաբերակցությանը՝ հիմնվելով նաև սահմանադրահիրավական բարեփոխումների արդյունքում վկայակոչված եզրույթների բովանդակային ծավալի վերաբերյալ ձևավորված մոտեցումների վրա, և առաջ է քաշում այն մոտեցումը, որ ոչ առևտրային կազմակերպություններին առավել բնորոշ է ընդհանրապես տնտեսական և ոչ թե ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը: Ըստ այդմ՝ առա-

ջարկվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում սահմանել, որ ոչ առևտրային կազմակերպություններն իրավունք ունեն զբաղվելու տնտեսական, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությամբ, իսկ շահույթը բաշխելու արգելքի սկզբունքը վերաձևակերպել որպես եկամուտը բաշխելու արգելքի սկզբունք:

Երկրորդ գլուխը՝ *«ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄՔԸ ՁԵՎԱՎՈՐՈՂ (ԱՐՏԱՀԱՅՏՈՂ) ՄԱՐՄԻՆՆԵՐԸ» վերտառությամբ,* բաղկացած է չորս պարագրաֆից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ *«Ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման (կորպորատիվ կառավարման) առանձնահատկությունները» վերտառությամբ,* հեղինակն ուսումնասիրում է «կորպորատիվ կառավարում» եզրույթը և դրա կիրառելիությունը խնդրո առարկա իրավաբանական անձանց նկատմամբ՝ եզրահանգելով, որ այն կիրառելի է միայն միավորում համարվող ոչ առևտրային կազմակերպությունների նկատմամբ: Այնուհետև, ուսումնասիրելով առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կորպորատիվ կառավարման առանձնահատկությունները՝ հեղինակը վերհանում է ոչ առևտրային կազմակերպությունների կորպորատիվ կառավարման բնորոշ գծերը:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ *«Հասարակական կազմակերպության կառավարման առանձնահատկությունները ՀՀ-ում» վերտառությամբ,* հեղինակն ուսումնասիրում է միավորում համարվող և կորպորատիվ տիպի ոչ առևտրային կազմակերպություն հանդիսացող հասարակական կազմակերպությունների կառավարման համակարգն ու այն կազմող մարմինների իրավական կարգավիճակը և հիմնավորում, որ ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում նշված կազմակերպությունների կորպորատիվ կառավարման համակարգում զսպումների և հակակշիռների գործուն կառուցակարգեր, չի սահմանում կառավարման հստակ մոդել կամ մոդելներ՝ իրենց բնորոշ իրավական կարգավիճակով՝ վտանգելով հասարակական կազմակերպության գործունեության արդյունավետությունը: Նշված խնդիրների լուծման նպատակով հեղինակն առաջարկում է խորհրդի՝ որպես կառավարման մարմնի պարտադիր կարգով ստեղծման անհրաժեշտությունը՝ միաժամանակ նաև հիմնավորելով վերջինիս՝ գործադիր մարմնի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու իրավասությամբ օժտելու օրենսդրական հնարավորության նախատեսման անհրաժեշտությունը:

Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ *«Հիմնադրամի կառավարման առանձնահատկությունները ՀՀ-ում» վերտառությամբ,* հեղինակն ուսումնասիրում է հիմնադրամի կառավարման առանձնահատկությունները՝ կատարելով կորպորատիվ տիպի ոչ առևտրային իրավաբանական անձանց և հիմնադրամների կառավարման համակարգի համեմատական վերլուծություն՝ վեր հանելով հիմնադրամների կառավարման մոդելն ու դրանում ընդգրկված կառավարման մարմինների իրավական կարգավիճակի նմանությունները և տարբերությունները հասարակական կազմակերպության, ինչպես նաև առևտրային իրավաբանական անձ հանդիսացող բաժնետիրական ընկերության համանման մարմիններից:

Երկրորդ գլխի չորրորդ պարագրաֆում՝ *«Ոչ առևտրային կազմակերպության կառավարման մարմինների պատասխանատվությունը» վերտառությամբ,* հեղինակն անդրադառնում է ՀՀ-ում ոչ առևտրային կազմակերպությունների կամքը ձևավորող և արտահայտող մարմինների քաղաքացիաիրավական պատասխանատվության հիմնախնդրին և առաջ քաշում այն գաղափարը, որ անհրաժեշտ է քաղաքացիաիրավական պատասխանատվություն նախատեսել ոչ միայն կազմակերպության անունից հանդես գալու իրավունք ունեցող, այսինքն՝ գործադիր մարմնի, այլև կազմակերպության բոլոր կառավարման մարմինների անդամների համար, երբ վերջիններս կխախտեն ողջամիտ և ի շահ կազմակերպության գործելու պարտականությունները: Ընդ որում՝ հեղինակն այս պարտականությունների բովանդակային ծավալը հստակեցնելու նպատակով առաջարկում է օրենսդրական մակարդակում ձևակերպել ոչ առևտրային կազմակերպության կամքը ձևավորող և արտահայտող մարմինների հետևյալ ֆիդուցիար պարտականությունները՝ հոգատար լինելու *(duty of care)* և հավատարիմ լինելու *(duty of loyalty)*:

Միաժամանակ հեղինակն առաջարկում է նաև խնդրո առարկա իրավաբանական անձանց կողմից եկամտի բաշխման քողարկված դրսևորումները և չարաշահումների միջոցով կազմակերպությունը մասնավոր շահին ծառայեցնելը կանխարգելելու նպատակով սահմանել վերջիններիս կողմից տրվող վարձատրության և փոխհատուցման ողջամտության պահանջ, ինչպես նաև շահերի բախման առկայությամբ կնքվող գործարքների առանձնահատուկ իրավակարգավորումներ:

Ատենախոսության եզրակացությունում ի լրումն պաշտպանության

ներկայացվող հիմնական դրույթների, կատարվում են մի շարք ընդհանրացումներ ու առաջարկություններ, որոնցից առավել կարևորները հանգում են հետևյալին.

1. Արտասահմանյան փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոչ առևտրային կազմակերպությունները որպես կանոն հանդիսանում են պետությունից անկախ գործող (ոչ կառավարական) կազմակերպություններ (NGO), ինչի արդյունքում դրանք շատ հաճախ սկսել են անվանվել քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, որով պայմանավորված՝ վերջիններիս նկատմամբ պետք է գործեն իրավակարգավորման հետևյալ սկզբունքները.

1) պետությունից առանձնացվածությունը և,

2) որպես հետևանք, կազմակերպության ստեղծմանն ու գործունեությանը պետության կողմից անհարկի միջամտությունների բացառումը,

3) դրանց ստեղծման կամավորությունը,

4) վերջիններիս առավելագույն ինքնուրույնության, ինքնավարության ու ինքնականոնակարգման սկզբունքների հիման վրա գործելու հնարավորության տրամադրումը,

5) պետության միջամտության թույլատրելիությունը հնարավոր չարաշահումների դեմ որոշակի կառուցակարգերի սահմանման միջոցով:

2. Միաժամանակ ոչ առևտրային կազմակերպություններին որպես պետությունից առանձնացված (մասնավոր իրավունքի) կազմակերպություններ դիտարկելը ենթադրում է, որ պետության արդյունավետ վերահսկողության ներքո գտնվող կազմակերպությունները չեն կարող կարգավորվել վերոնշյալ սկզբունքներով և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ միևնույն իրավական ռեժիմի սահմաններում, ուստի առաջարկվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ իրավաբանական անձանց տեսակները նախատեսող կամ սահմանազատող դրույթները լրամշակել, փոփոխել և այդպիսի կազմակերպությունները դասել հանրային իրավունքի իրավաբանական անձանց շարքին՝ հիմք ընդունելով հետևյալ չափանիշները.

1) արդյո՞ք կազմակերպության ստեղծումը օրենսդրի կամարտահայտության արդյունք է,

2) արդյո՞ք կազմակերպությունը ստեղծվել է մասնավոր կազմակերպություններին վերաբերող օրենսդրության հիման վրա,

3) արդյո՞ք կազմակերպությունը պետական մարմինների կամ դրանց

կառուցվածքում ընդգրկված հաստատությունների որոշակի մասնիկն է կազմում,

4) արդյո՞ք կազմակերպությունն ունի որոշակի իրավասություններ (արտոնություններ), որոնք սահմանված չեն ընդհանուր կիրառման օրենքներով (օրինակ՝ վարչաիրավական գործառույթներ իրականացնելու հնարավորություն կամ վարքագծի պարտադիր նորմեր սահմանելու իրավունք և այլն),

5) արդյո՞ք կազմակերպությունը հանդես է գալիս որպես հանրային իշխանություն կրող մարմին, ինչպիսիք են օրինակ որոշ մասնագիտական կառույցներ, որոնց ստեղծումը պետության կողմից պարտադիր է:

3. Ելնելով քաղաքացիական իրավասուբյեկտության առանձնահատկություններից՝ առաջարկում ենք մասնավոր իրավունքի ոչ առևտրային կազմակերպությունները օրենսդրական մակարդակում դասակարգել երկու տեսակի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված միավորվելու ազատության իրավունքի հիման վրա, այսինքն՝ մարդկանց միավորման արդյունքում ստեղծված, կորպորատիվ տիպի, անդամություն և ի դեմս անդամների ընդհանուր ժողովի՝ կառավարման բարձրագույն մարմին ունեցող կազմակերպություն՝ ***«Միավորում»*** և որոշակի նպատակ իրագործելու համար կապիտալի միավորման կամ առանձնացման արդյունքում ստեղծված կազմակերպություն՝ ***«Հիմնադրամ»***:

4. Ոչ առևտրային կազմակերպություններին բնորոշ է ոչ այնքան ձեռնարկատիրական, որքան եկամուտ ապահովող տնտեսական այլ գործունեության իրականացումը, ինչն արտացոլված չէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում: Հետևաբար, ինչպես նաև ՀՀ սահմանադրական բարեփոխումներից բխող իրավակարգավորումներ նախատեսելու և համասեռ հասարակական հարաբերությունների կարգավորման ներդաշնակությունն ապահովելու անհրաժեշտությամբ թելադրված առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերությամբ նախատեսել. *«ոչ առևտրային կազմակերպությունը կարող է (...) իրականացնել տնտեսական, այդ թվում՝ եկամուտ ապահովող, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեություն, եթե դա նախատեսված է օրենքով»*:

5. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասից բխում է, որ ոչ առևտրային են շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող կազմակերպությունները: Այսինքն՝ գործող օրենսդրության համաձայն այս կազմակերպությունները չեն

կարող շահույթ ստանալու նպատակ հետապնդել, մինչդեռ վերոգրյալի լույսի ներքո արձանագրելով, որ ոչ առևտրային կազմակերպությունները կարող են զբաղվել տնտեսական՝ այդ թվում ձեռնարկատիրական գործունեությամբ, գտնում ենք, որ վերջիններս չեն կարող ստեղծվել (գործունեության հիմնական նպատակ ունենալ) շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով, սակայն դա կարող է լինել նրանց գործունեության նպատակներից մեկը: Հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վկայակոչված նորմն անհրաժեշտ է փոփոխել՝ իրավաբանական անձանց առևտրայինի և ոչ առևտրայինի դասակարգման առաջին չափանիշը սահմանելով՝ շահույթ ստանալու նպատակով ստեղծված (չ)լինելը:

6. Առաջարկում ենք իրավական որոշակիության սկզբունքին չհամապատասխանող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ պարբերությամբ նախատեսված հետևյալ իրավադրույթը. *«ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքով առևտրային կազմակերպություններ համարվող իրավաբանական անձանց գործունեությանը վերաբերող կանոնները, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտից կամ իրավահարաբերության էությունից»* ուժը կորցրած ճանաչել, քանի որ այն չի լուծում գործնական խնդիրներ, ընդհակառակը, ինչպես մեկնաբանման, այնպես էլ կիրառման տեսանկյունից առաջացնում է բազմաթիվ խնդիրներ:

7. Ոչ առևտրային կազմակերպությունների իրավունակության ընդլայնման պայմաններում՝ վերջիններիս շահառուների, պարտատերերի շահերը պաշտպանելու, ինչպես նաև ապագա գործունեության վրա առավել մեծ ազդեցություն ունեցող որոշումներում սխալվելու հավանականությունը նվազեցնելու և հնարավոր չարաշահումները կանխարգելելու նպատակով առաջարկում ենք ոչ առևտրային կազմակերպությունների կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ նախատեսել խոշոր գործարքներին վերաբերող օրենսդրական կանոններ՝ այդպիսի գործարքների կարգավորման համար հիմք ընդունելով բաժնետիրական ընկերությունների կողմից խոշոր գործարքներին վերաբերող իրավադրույթները:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Գևորգ Պողոսյան, «Ոչ առևտրային կազմակերպությունների կողմից իրականացվող տնտեսական գործունեության որոշ առանձահատկություններ», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016թ. նստաշրջանի նյութերի ժողովածու / ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ: Խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ հրատ., 2017, էջեր 228-246:

2. Գևորգ Պողոսյան, «Ոչ առևտրային կազմակերպությունների հատկանիշները», Պետություն և իրավունք, Երևան, 2017, թիվ 2-3 (76-77), էջեր 71-89:

3. Գևորգ Պողոսյան, «Ոչ առևտրային կազմակերպությունները որպես քաղաքացիական հասարակության կազմակերպություններ», Դատական իշխանություն, Երևան, 2017, թիվ 10-11 (221-222), էջեր 10-23:

4. Գևորգ Պողոսյան, «Ոչ առևտրային կազմակերպությունների դասակարգումը», Արդարադատություն, Երևան, 2018, թիվ 1 (42), էջեր 62-71:

5. Գևորգ Պողոսյան, «Խորհրդի՝ որպես կոլեգյալ կառավարման մարմնի ձևավորման անհրաժեշտությունը և դերը հասարակական կազմակերպությունների կառավարման մարմինների համակարգում», Դատական իշխանություն, Երևան, 2018, թիվ 01-02 (223-224), էջեր 42-52:

6. Գևորգ Պողոսյան, «Ոչ առևտրային կազմակերպությունների կորպորատիվ կառավարման առանձնահատկությունները», Դատական իշխանություն, Երևան, 2018, թիվ 03-04 (225-226), էջեր 45-55:

7. Գևորգ Պողոսյան, «Հասարակական կազմակերպության անդամների ձայնի իրավունքի և անդամավճարի պարտականության առանձնահատկությունները ՀՀ-ում», Այլընտրանք գիտական հանդես, Երևան, 2018, թիվ 1, էջեր 180-188:

8. Գևորգ Պողոսյան, «Շահագրգռվածության առկայությամբ գործարքների իրավական կարգավորման անհրաժեշտությունը ոչ առևտրային կազմակերպություններում», Պետություն և իրավունք, Երևան, 2018, թիվ 1 (79), էջեր 43-55:

9. Գևորգ Պողոսյան, «Ոչ առևտրային կազմակերպությունների տնտեսական գործունեության արդյունքում ստացվող գումարի բաշխման արգելքի որոշ ասպեկտներ», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, Երևան, 2018, թիվ 1 (1)/

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ: Խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ հրատ., 2018, էջեր 130-147:

ПОГОСЯН ГЕВОРГ АРТУРОВИЧ

НЕКОММЕРЧЕСКИЕ ОРГАНИЗАЦИИ КАК СУБЪЕКТЫ ГРАЖДАНСКОГО ПРАВА

РЕЗЮМЕ

Диссертация посвящена изучению гражданско-правовых отношений с некоммерческими организациями.

В настоящее время одним из важнейших направлений развития Республики Армения является содействие развитию гражданского общества, в котором первичную роль в числе институтов гражданского общества имеют некоммерческие организации, которые чаще всего свое предназначение осуществляют при помощи участия в имущественно-правовых отношениях. Указанная сфера также находится в центре внимания законодательных реформ других государств региона, а также международных структур.

Не смотря на необходимость крупномасштабных исследований, связанную с нехваткой законодательных механизмов и текущей согласованности их деятельности, деятельность некоммерческих организаций в качестве специальных субъектов гражданско-правовых отношений и проблем, возникающих в связи с этим, в Республике Армения полностью не раскрыты, что связано с острым дефицитом исследований в данной сфере. При чем, продуктивная деятельность некоммерческих организаций, в частности, связана с выявлением и решением вопросов субъекта гражданского права, к чему направлена данная работа.

Кроме вышеизложенного, учитывая, что эта сфера, особенно в области имущественно-правовых отношений, предоставляет широкий спектр возможностей для различных злоупотреблений, данный научный труд также направлен на решение как теоретических, так и практических проблем в области урегулирования обсуждаемой проблемы, предлагая эффективные механизмы для борьбы с этими злоупотреблениями.

Объектом данного исследования являются гражданско-правовые отношения с участием некоммерческих организаций, в основном на примере общественных организаций и учреждений, а предметом - существующие проблемы правового регулирования некоммерческих организаций и

правоотношений с их участием.

Целью исследования является систематическое изучение и анализ правовых отношений с участием некоммерческих организаций в РА, выявление теоретических и практических проблем, введение в правовое обращение новых теоретических положений, терминов и понятий, дополнение пробелов в законодательстве, регулирующем правоотношения с участием некоммерческих организаций на основе результатов комплексного обследования, усовершенствование существующих регулировок, а также разработка рекомендаций по укреплению и развитию механизмов реализации и защиты прав участников и бенефициаров в указанных правовых отношениях.

Диссертация является первым разносторонним и полным научным исследованием в армянском праве, которая на примере общественных организаций и учреждений пытается обосновать особенности гражданско-правовых отношений с участием некоммерческих организаций, определить характеристики некоммерческих юридических лиц, особенности управления (включая корпоративное управление) и наиболее предпочтительную модель, в том числе затрагивая темы конфликта интересов в некоммерческих организациях, вопросы слишком высокой зарплаты в данных организациях, изучая пробелы в правовом регулировании, касающиеся ответственности руководящих органов, пытаясь выставить варианты наиболее эффективного регулирования правоотношений с участием некоммерческих организаций, включая классификацию последних и изучение механизмов защиты прав и законных интересов их участников на основе характеристик, вытекающих из классификации, выявить существующие юридические и нормативные вопросы в области управления некоммерческих организаций предоставляя наиболее передовые решения. Более того, в данной диссертации изучены и сформулированы такие теоретические концепции и термины, относящиеся к особенностям некоммерческих организаций как субъектов гражданского права, которые до настоящего времени не были известны армянской правовой мысли.

Диссертация была подготовлена на кафедре гражданского права ЕГУ. Основные результаты исследования отражены в научных статьях автора, которые были опубликованы в разных журналах и научных сборниках из списка, утвержденном Высшей Аттестационной Комиссией. Некоторые положения диссертации были применены во время практической работы автора в ряде организаций государственного и частного сектора РА, в том числе во время осуществления деятельности на руководящих должностях организации, занимающейся оказанием юридических услуг.

POGHOSYAN GEVORG

NONPROFIT ORGANIZATIONS AS A SUBJECT OF CIVIL LAW

SUMMARY

The dissertation is devoted to the research of civil legal relations with participation of nonprofit organizations.

Currently one of the most important directions of development in the Republic of Armenia is to support development of civil society, where from civil society institutions the primary role is vested on nonprofit organizations, which perform their mission most often trough participation in property legal relations. Mentioned sphere is in the spotlight of legislative improvements of also other states of the region, as well as international institutions.

Despite necessity of extensive researches, conditioned by lack of legislative mechanisms and current spontaneity of its activity, however, activities of nonprofit organizations as a separate subject of civil legal relations and main issues accruing due to it, are not completely revealed and enlightened in the Republic of Armenia, conditioned by strict lack of researches performed in the sphere. Moreover, effective activity of nonprofit organizations is connected with reveal and solution of problems of latter as a subject of civil law, to which this work is directed to.

Besides the abovementioned, taking into account that this sphere gives wide opportunities to different abuses within the scopes of property legal relations, this scientific work is also directed to solve as theoretic so practical main issues existing in the sphere by offering effective mechanisms for fighting against such speculations.

Object of research are civil legal relations with participation of nonprofit organizations, mainly by the example of public organizations and foundations, and the subject are existing main issues of legal regulation of legal relations of nonprofit organizations with participation of latter.

The purpose of research is systematic research and analysis of legal relations with participation of nonprofit organizations in RA, revealing of theoretical and practical main issues, investment of new provisions, terms and ideas in circulation, filling the gaps of legislation regulating legal relations with participation of nonprofit organizations based on results of performed complex research, improvement of existing regulations, as well as designation of offers,

directed at strengthening and development of mechanisms of realization and defense of rights of participants and beneficiaries of mentioned legal relations.

Dissertation is the first comprehensive and complete scientific research of domestic jurisprudence, where an attempt was made to substantiate the features of civil legal relations with the participation of nonprofit organizations by the example of public organizations and foundations, to determine the characteristics of nonprofit legal entities, governance (including corporate governance) specificities and the preferable model, including gaps in legal regulation concerning conflict of interest in nonprofit organizations, too high salaries, civil responsibility of governing bodies, introduce the classification of the latters aiming at revealing of effective regulations of legal relations with participation of nonprofit organizations and excersice the study of mechanisms for protecting the rights and legitimate interests of their participants on the basis of characteristics arising from the classification, identify existing legal and regulatory issues in the governance of nonprofit organizations and offer advanced solutions. Furthermore, at the present time such theoretical concepts and terms related to the peculiarities of nonprofit organizations as a subject of civil law, which until now were not known to the Armenian legal thought, have been studied and formulated.

Dissertation is prepared in the Chair of Civil Law of YSU. Main results of research are expressed in scientific articles published by the author, which were published in different magazines and scientific journals involved in list, approved by Supreme Certifying Commission. A range of provisions of dissertation was applied during practical activity of the author in leading positions of a number of state and private organizations of RA, including organization providing legal services.